ERNST & YOUNG

Ernst & Young CJSC
1 Northern Ave., Office 27
Yerevan, 0001, Armenia
Tel: +374 10 500790
+374 10 500705
Fax: +374 10 500706
www.ey.com/cis

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0001
Հյուսիսային պող. 1,
գրասենյակ 27
Հեռ. +374 10 500790
+374 10 500705
Ֆաքս. +374 10 500706
www.ey.com/cis

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերին և Խորհրդին

Կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները ներառում են 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը, 2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվությունը, համապարփակ եկամտի մասին ամփոփ հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունը, որոնք քաղված են 2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար «ՎՏԲ-Հայաստան Բանկ» Փակ Բաժնետիրական Ընկերության (այսուհետ՝ Բանկ) աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններից: Մենք տվել ենք դրական աուդիտորական եզրակացություն 19 ապրիլի 2011թ. թողարկված այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր աուդիտորական հաշվետվությունում: Այդ ֆինանսական հաշվետվությունները և ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում աուդիտորական հաշվետվության թողարկումից հետո տեղի ունեցած իրադարձությունների ազդեցությունը այս ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների կողմից պահանջվող Բանկի աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների բոլոր բացահայտումները: Այդ իսկ պատճառով ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն փոխարինում Բանկի աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա ամփոփ ֆինանսական հաշվետվությունները Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներին համապատասխան պատրաստելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է «Ամփոփ Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ուղղությամբ աշխատանքներ» Աուդիտի միջազգային ստանդարտին (ԱՄՍ 810) համապատասխան իրականացրած ընթացակարգերի հիման վրա ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ եզրակացության արտահայտումը:

Եզրակացություն

Մեր կարծիքով, 2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար Բանկի աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններից քաղված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համապատասխանում են Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներին համապատասխան պատրաստված ֆինանսական հաշվետվություններին:

Աուդիտի բաժնի հիմնադիր գործընկեր՝ Ս. Տասկան

Գլխավոր տնօրեն՝ Մ. Ալեքսանդարյան՝ ի դեմս լիազորված անձ Է. Հայրապետյանի (գործող 2008 թ. սեպտեմբերի 1-ին տրված լիազորագրի հիման վրա) Է. Հայրապետյան

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
19 ապրիլ 2011թ.

A member firm of Ernst & Young Global Limited